ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 52 10.01.2011թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի 2011 թվականի բյուջեն հաստատված ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 19 նիստի թիվ 85-Ն որոշմամբ հաստատում եմ իր համամասնություններով ,յուրաքանչյուր եռամսյակ 25 %-ի չափով:

Սարալանջ համայնքի ղեկավար՝ Վ.Հարոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 53 24.03.2011թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքում ներհամայնքային ճանապարհների բարեկարգման , սանիտարական աշխատանքներ կատարելու , կազմակերպելու մասին.

Որոշում եմ

Կազմակերպել և համայնքի բնակչությանը մասնակից դարձնել ներհամայնքային ճանապարհների սանիտարական մաքրման,մասնակի փոսալցումների աշխատանքներին:Աշխատանքները կազմակերպելու պատասխանատվությունը դնել գյուղապետի տեղակալ Յուրա Սիմոնյանի վրա:

Սարալանջ համայնքի ղեկավար՝ Վ.Հարոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 54 31.03.2011թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների պահպանումը գարնանային ջրհեղեղներից
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ պարբերության դրույթներով

Որոշում եմ

Սարալանջ համայնքի հողերը գարնանային հեղհեղումներից պահպանելու համար համայնքի վարչական տարածքում կատարել հեղեղատարների մաքրում,որի պատասխանատվությունը դնել աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Հովհաննես Ավդալյանի վրա:

Սարալանջ համայնքի ղեկավար` Վ.Հարոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 55 09.04.2011թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի բնակիչների սեփականություն համարվող հողերի գարնանացանի աշխատանքները կազմակերպելու մասին
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 4-րդ հոդվածի դրույթներով

Որոշում եմ

Հանձնարարել Սարալանջ համայնքի ղեկավարի տեղակալ Յուրա Սիմոնյանին ճիշտ ժամանակին կազմակերպել գարնան գյուղատնտեսական աշխատանքների գործընթացը և ժամանակին ավարտել:

Սարալանջ համայնքի ղեկավար` Վ.Հարոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 56 11.04.2011թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքում Քաղաքացիական պաշտպանության շտաբային ուսումնավարժություն անցկացնելու մասին:
Ի կատարումն Շիրակի մարզային փրկարարական վարչության «Շիրակի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2011թ. հիմնական միջոցառումների պլանի և 2011 թվականի մարզի թվով 30 գյուղական համայնքներում շտաբային ուսումնավարժություններ անցկացնելու մասին»: Շիրակի մարզպետի թիվ 62Ա որոշման համաձայն սույն թվի ապրիլի 29-ին Սարալանջ համայնքում իմ ղեկավարությամբ անցկացնել շարային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ճնաբքի դեպքում» թեմայով:
Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով .
1. Նշանակել
Ուսումնավարժության կազմակերպման ղեկավարման շտաբի պետ – համայնքի ղեկավարի տեղակալ Յուրա Սիմոնյանին
Շտաբի կազմում ընդգրկել համայնքի ՔՊ կազմավորումների ղեկավարներին:
Ուսումնավարժության արդյունքների ամփոփման խմբի պետի օգնական- համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակից Վ. Մարտիրոսյան:
2.Ուսումնավարժությունում ընդգրկել`
Համայնքի տարահանման և Արտակարգ իրավիճակների հանձնաժողովները ,ՔՊ կազմավորումները:
3.ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետին`
մշակել և մինչև 26.04.2011թ . իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը:
4. Ուսումնավարժության ղեկավարումը իրականացնել գյուղապետի մշտական կառավարման կետից:

Սարալանջ համայնքի ղեկավար` Վ.Հարոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 57 10.06.2011թ.

Համայնքում քաղաքացիական պաշտպանության շտաբ,տարահանման հանձնաժողով և քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ ստեղծելու մասին
Ղեկավարվելով 29.12.1996 թ. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» և 29.03.2002 թվականի «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Սարալանջ համայնքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորման , կազմակերպման և իրականացման նպատակով՝

1. Ստեղծել
   1) Քաղաքացիական պաշտպանության շտաբ,շտաբի պետ նշանակել համայնքի ղեկավարի տեղակալին և շտաբը համալրել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներով Յ. Սիմոնյան
   2) Համայնքի տարահանման հանձնաժողով ,հանձնաժողովի նախագահ նշանակել համայնքի դպրոցի տնօրենին և հանձնաժողովը համալրել դպրոցի ուսուցչական կազմից: Գ. Սուվարյան
   3)Քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝
   ա) փրկարարական պումբ՝ 1-9 անձնակազմով, հրամանատար՝ Հ. Ավդալյան
   բ)կապի խումբ ՝ 1-3 անձնակազմով,հրամնատար՝ Ա. Հովսեփյան
   գ)Քիմիական ,ճառագայթային դիտարկման կետ 1/3 անձնակազմով,հրամանատար Մ. Սուվարյան
   դ)Անհատական պաշտպանության միջոցներ բաշխման խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար Հ. Սուվարյան
   ե)Հասարակական կարգի պահպանման խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Ս. Թորոսյան
   զ) Գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանության խումբ 1/3 անձնակազմով, հրամանատար ՝ Օ. Հովհաննիսյան
2. Հանձնարարել
   1. Քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ
      ա) Քաղաքացիական պաշտպանության կազմավորումները համալրել անձնակազմով,գույքով և տեխնիկայով:
      բ)Կազմակերպել և իրականացնել համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի,կազմավորումների անձնակազմի և բնակչության ուսուցումը ,համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 22.04.2004թ. թիվ 633-Ն որոշման:

3.Համայնքապետի քարտուղարին՝
սույն որոշման մասին իրազեկել ըստ պատկանելիության:
4.Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ

Սարալանջ համայնքի ղեկավար՝ Վ.Հարոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 58 10.06.2011թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի վարչական տարածքում գտնվող արոտավայրում անասունների խմելու ջրի ջրագծերը ունեն վերանորոգման կարիք:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 44 հոդվածի առաջին կետի դրույթներով

Որոշում եմ

Արթիկ քաղաքի բնակիչ Հայկարամ Խնգոյան -ի հետ կնքել երկկողմանի պայմանագիր անասունների խմելու ջրի ջրագծերը վերանորոգելու համար:
Համաձայն պայմանագրի Հայկարամ Խնգոյանը իր ուժերով կկատարի անասունների խմելու ջրի ջրագծերի վերանորոգման աշխատանքները:
Նշված աշխատանքները կատարելու համար նրան վճարել 100.0 /մեկ հարյուր հազար/ դրամ:

Սարալանջ համայնքի ղեկավար՝ Վ.Հարոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 59 01.07 .2011թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառում կատարելու մասին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համայնքի ղեկավարի սույն բնագավառում պետական պատվիրակված լիազորությունների իրականացման 1-ին կետի դրույթներով

Որոշում եմ

Կատարել ՀՀ Շիրակի մարզի Սարալանջ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասի ընթացիկ հաշվառում,կազել համայնքի հողային հաշվեկշիռը 01.07.2011 թվականի դրությամբ և ներկայացնել համայնքի ավագանու առաջիկա նիստի քննարկմանը և հաստատմանը:
Նշված աշխատանքները իրականացնելու համար հանձնարարում եմ համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ Գոռ Ղազարյանին:

Սարալանջ համայնքի ղեկավար`                    Վ.Յարոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 60                    10.07 .2011թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքում խոտհնձի աշխատանքները կազմակերպելու մասին

Որոշում եմ

Հանձնարարել Սարալանջ համայնքի ղեկավարի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Հովհաննես Ավդալյանին ժամանակին կազմակերպելու և ավարտին հասցնելու խոտհնձի աշխատանքները:

Սարալանջ համայնքի ղեկավար`                    Վ.Յարոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 61                    01.08 .2011թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքում գարու , ցորենի բերքահավաքը կազմակերպելու մասին

Որոշում եմ

Հանձնարարել Սարալանջ համայնքի ղեկավարի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Հովհաննես Ավդալյանին, որպեսզի հսկողություն սահմանի և ժամանակին ու անկորուստ կազմակերպվի գարու,ցորենի բերքահավաքը: Անհրաժեշտության դեպքում հարևան համայնքներից հրավիրել մի քանի հացահատիկահավաք կոմբայներ:

Սարալանջ համայնքի ղեկավար`                    Վ.Յարոյան